նակս էր ի կողմանս արեւմտից, և այր մի ընդ թղթոյն առաքելով, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս, առաքեսցէ և ինքն եպիսկոպոս մի յիւրոցն և տացէ Հրաման ձեռնադրել զմանուկն Գագիկ յաթոռն Աղուանից, զի մի՝ անառաջնորդ կորիցէ աշխարհն։ Իսկ Հայրապետն ձեռնադրեաց զառաքեալն. Հրաման ետ և եպիսկոպոսին Կարնոյ գնալ յաշխարհն Աղուանից և ձեռնադրել Կաթուղիկոս Աղուանից։ Ապա եկեալ եպիսկոպոսին Կարնոյ Սահակայ և միւս եպիսկոպոսն, ձեռնադրեն այլեւս եպիսկոպոս երկոտասան՝ ըստ Հրամանի գրոց, և ապա ձեռնադրեցին զԳագիկն կաթուղիկոս, և անուանեցին Գրիգորէս ըստ անուան Կաթուղիկոսին Հայոց։

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ եղեւ յանկարծակի մէգ և մառախուղ, և լցաւ առ հասարակ լեառն և դաշտ, և եղեւ շարժ ահագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Գանձակ, և շնորհօքն Աստուծոյ ապրեալ եղեւ նորընծայ Կաթուղիկոսն, բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր՝ հանդերձ այլ բազմութեամբ արանց և կանանց և մանկտւոց, որոց ոչ գոյ թիւ, զոր սպանին շինուածքն անկեալ ի վերայ։ Եւ եկն թագաւորն Վրաց Դէմիտրէ, և աւար էառ զամենայն ինչսն, տարաւ և զգրուանս քաղաքին յիւր աշխարհն. փլաւ և լեառն Ալհարակ, և կապեաց զձորակն, որ անցանէր ընդ մէջ նորա, և եղեւ ծով, և է մինչեւ ցայսօր ժամանակի։ Եւ յետ ութ ամի երեւեցաւ աստղ մի գիսաւոր լի լուսով, որ նշանակ եղեւ սովոյ և սրոյ և գերութեան, որ կալաւ զաշխարհս։

Եւ յորժամ եղեւ այր կատարեալ Կաթուղիկոսն Գագիկ լի իմաստիւք Աստուածայնովք, փոխեցաւ յաշխարհէ, և դարձեալ խաւար եղեւ այնոցիկ կողմանցն։ Եւ ապա Բէժգէ, որ եթող ըզկարգն և էառ կին, և յետ նորա Տէր Ստեփաննոս ամս քառասուն. և զկնի նորա Խամիշ ամս քառասուն, որ շինեաց եկեղեցի հրաշալի ի գաւառն Միափոր ի վանքն՝ որ կոչի Խամշի. սա եհաս յաւուրս մեր, և ապա Տէր Ներսէս եղբայր նորին, այր հեզ և բարի բնութեամբ, որ ձեռնադրեալ եղեւ ի ՈՁԴ թուականին Հայոց»։